

Յայտնի ցոյց են այս չարաղէտ դէպքերն՝ թէ որ-
չափ կրնայ երբեմն քսութիւնն ու զօպարտու-
թիւնն ազդել, մանաւանդ՝ — ըսենք առ սէր
Ճշմարտութեան, — երբ խոհեմական զգուշու-
թիւնը թեթեւակի իսկ զանց առնուի: Բայց
չկանխենք, եւ մեր պատմութեան թելը շարու-
նակենք: —

Գրիգոր Տիւզեան (ծն 1774) հօրը մա-
հումբն՝ իրր երիցագոյն մանչ զաւակ, անոր
պաշտօնին յաջորդ համարուեցաւ: Չի կրնար ու-
րացուիլ իւր ուշիմութիւնն եւ մանաւանդ գի-
տութիւնն. սակայն փառաւորութեանց եւ պան-
ծասէր շքեղութեանց ալ չափազանց միտութիւն
մ'ունէր, որով առաւել եւս կը գրգռէր իւր
պաշտօնին աչք նետողներն: Իւր հօր արքունի
պալատան մէջ թողած անուան յիշատակին հա-
մար՝ Տիւզեան ընտանիքն Օսմանեան Պետու-
թեան առջեւ ունեցած համարումն չկորսնցուց.
բայց բուն պաշտօնն՝ որ էր արքունի ոսկերչա-
պետութիւն, յանձնուեցաւ ոչ թէ Գրիգորի, ինչ-
պէս ցարդ սովորութիւն էր, այլ Յովհաննու եր-
կրորդ որդւոյն՝ Սերգիս Չէլէպոյն (ծն. 1777
Հոկ. 15): Իսկ Գրիգոր միեւնոյն օրը՝ 1812 ին
արքունի հրովարտակաւ փողերանոցի Բաթալիան
առաւ: Երկու եղբարք, հինգ տարի վերջը
միեւնոյն օրն, այսինքն 1817 Յունուար 27 ին,
ամուսնացան, Գրիգոր՝ Քաթինկոյ Հէյպէթէրեան
օրիորդին հետ, իսկ Սերգիս՝ անուանի բժիշկ Պօ-
ղոս Շաշեանի դստեր՝ Սրբուհի օրիորդին հետ, որ
նոյն տարին՝ 1817 Նոյ. 1 ին ծնաւ զՄիհրան Պէյ: